ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

2017 թվականի _____-ի N _____- Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի N792-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի «Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում քաղաքաշինական գործունեության իրականացման կարգը հաստատելու մասին» N 792-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Որոշման 2-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության» և «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությունն» բառերը փոխարինել համապատասխանաբար՝ «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի» և «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն» բառերով:

3. Որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«3) Սույն որոշմամբ հաստատված կարգի դրույթները գործում են ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N728-Ն որոշմամբ առանձնացված քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում:»:

Հավելված
ՀՀ կառավարության
2017 թվականի _____-ի N ____-Ն որոշման

« Հավելված
ՀՀ կառավարության 2009 թվականի
հունիսի 26-ի N 792-Ն որոշման

Կ Ա Ր Գ
ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների առաջադրման, դրանց տարածքների առանձնացման և այդ տարածքներում քաղաքաշինական գործունեության հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) **քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտներ**՝ (այսուհետ՝ հատուկ կարգավորման օբյեկտներ)՝ տարածքներ, որոնց զարգացումը, հատակագծումը, քաղաքացիների, հասարակության և պետության շահերի ապահովումն իրականացվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված հատուկ կանոնների և ընթացակարգերի անհրաժեշտությամբ ու կիրառմամբ.

2) **հատուկ կարգավորման օբյեկտների սահմաններ**՝ տարածքը սահմանափակող պայմանական գծեր, որոնցից դուրս տարածքներում սույն կանոնները չեն գործում.

3) **քաղաքաշինական զարգացման հայեցակարգ**՝ տարածքի քաղաքաշինական զարգացման հիմնարար գաղափար, որի իրականացման համար առաջարկվում են նպատակային համալիր միջոցառումներ.

4) **կառուցապատման ներդրումային հայեցակարգ**՝ տարածքի քաղաքաշինական զարգացման հայեցակարգի և գոտևորման նախագծի դրույթներից բխող քաղաքաշինական և ճարտարապետական լուծումներն արտահայտող և դրանց տնտեսական արդյունավետությունը հիմնավորող փաստաթուղթ, որը ներկայացվում է առանձին համալիրների կառուցապատման էսքիզային նախագծերի, շինարարական

օբյեկտների նախագծերի, գործառնական տարածքների հատակագծման և բարեկարգման նախագծերի ներառմամբ:

5) **հողամասի քաղաքաշինական անձնագիր՝** սահմանված ձևի փաստաթուղթ, որում նշվում է հողամասի բնութագիրը, հողամասում առկա շենքերի, շինությունների և դրանց տեխնիկական վիճակի մասին տեղեկատվությունը, կադաստրային տվյալները, ինժեներատրանսպորտային և կոմունալ ենթակառուցվածքների գծերը, հողամասի օգտագործման ու կառուցապատման համար սահմանված քաղաքաշինական, ճարտարապետական, ինժեներատեխնիկական, պահպանական պահանջները, քաղաքաշինական կանոնակարգերը, սերվիտուտները և այլ սահմանափակումները:

3. Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման նպատակն է՝

1) քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում քաղաքաշինական գործընթացների կառավարման համար անհրաժեշտ իրավական բազայի ձևավորումը, քաղաքաշինական գործունեությունը կանոնակարգող հատուկ կարգերի և կանոնների սահմանումը.

2) քաղաքաշինական գործընթացներում պետական, հասարակական և անհատական իրավունքների ու շահերի ներդաշնակումը.

3) պատմականորեն ձևավորված ճարտարապետական կերպարի ուրույն հատկանիշների, կանաչ գոտիների պահպանման, պատմական միջավայրի հետ նոր կառուցապատման օրգանական փոխկապակցվածության, բնական և ձեռակերտ լանդշաֆտների ներդաշնակության ապահովման, կառուցապատման խտության կարգավորման և ներդրումային բարենպաստ միջավայրի ձևավորման նպատակով՝ հողամասերի կառուցապատման հատուկ պայմանների և կանոնների սահմանումը:

II. ՀԱՏՈՒԿ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՑՈՒՄԸ

4. Հատուկ կարգավորման օբյեկտների առանձնացումը պայմանավորված է՝

1) պետական և հասարակության անվտանգության ապահովման,

2) Հայաստանի Հանրապետության բնակավայրերի և միջբնակավայրային տարածքների կայուն և հավասարակշռված զարգացման՝ ուրբանիզացման անհամաչափ գործընթացների կանխման,

3) պատմականորեն ձևավորված կենսամիջավայրի, հայ ազգային ճարտարապետության ավանդույթների, պատմամշակութային ժառանգության պահպանման, վերականգնման և զարգացման,

4) պատմամշակութային հուշարձանների, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության,

5) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված պարտավորությունների կատարման,

6) համապետական, համայնքային կամ միջհամայնքային կարևոր նշանակություն ունեցող սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման,

7) բնակավայրերի սպասարկման և ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների զարգացման և բնապահպանական հիմնահարցերի փոխկապակցված լուծման,

8) քաղաքաշինական և լանդշաֆտային արժեքների պահպանման,

9) արտակարգ իրավիճակների կանխման, հետևանքների վերացման կարևորությամբ և անհրաժեշտությամբ:

5. Հատուկ կարգավորման օբյեկտների առանձնացման վերաբերյալ առաջարկությունները ներկայացվում են գրաֆիկական և տեքստային մասերով:

6. Գրաֆիկական մասը ներառում է.

1) քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտի սահմանների ուրվագիծը, Մ1:10000, 1:5000 ՝ համայնքի գլխավոր հատակագծի կամ տարածքի տեղագրական և կադաստրային քարտեզների հիմքի վրա,

7. Տեքստային մասը ներառում է՝

1) հատուկ կարգավորման օբյեկտների առանձնացման նպատակը.

2) առանձնացվող տարածքի ընդհանուր բնութագիրը և չափը.

3) հատուկ կարգավորման օբյեկտների քաղաքաշինական պլանավորման միջոցառումները:

8. Մեկից ավելի օբյեկտների առանձնացման դեպքում առաջարկության տեքստային մասը կարող է ներկայացվել համապատասխան տեղեկատվություն պարունակող աղյուսակի տեսքով:

III. ՀԱՏՈՒԿ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

9. Հատուկ կարգավորման օբյեկտների քաղաքաշինական զարգացման հիմնական փաստաթղթերն են՝

1) սահմանների նկարագիրը.

Հատուկ կարգավորման օբյեկտների սահմանների նկարագիրը մշակվում է համայնքի գլխավոր հատակագծի կազմում ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան կամ որպես ինքնուրույն փաստաթուղթ՝ լիազոր մարմնի կողմից իրականացվող պետական նպատակային ծրագրերի շրջանակներում: Ներառում է գծագրական պատկեր և տեքստային նկարագրություն՝ բեկյալ կետերի կոորդինատներով, փողոցների և այլ կարևոր օբյեկտների անվանումներով:

2) գոտևորման նախագիծը և քաղաքաշինական կանոնադրությունը՝

Մշակվում է համայնքի գլխավոր հատակագծի կազմում կամ որպես ինքնուրույն փաստաթուղթ՝ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ կետի «դ» ենթակետի և ՀՀ կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 408 որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կամ լիազոր մարմնի կողմից իրականացվող պետական նպատակային ծրագրերի շրջանակներում:

3) պատմամշակութային հիմնավորման ու պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանական գոտիների նախագծերը՝

Մշակվում է «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ կետի «ե» ենթակետի և ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 204-ի N 438 որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան:

4) քաղաքաշինական զարգացման հայեցակարգը՝

Մշակվում է լիազոր մարմնի կողմից պետական նպատակային ծրագրերի իրականացման շրջանակներում՝ ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի նիստի N 2 արձանագրային որոշման 5-րդ կետով հավանության արժանացած՝ «Հայեցակարգերի, ռազմավարությունների, ծրագրերի կազմման մեթոդական ուղեցույցին» համապատասխան, ներառելով նաև տարածքի քաղաքաշինական զարգացման և հատակագծման սխեմաներ, քաղաքաշինական և ճարտարապետական լուծումներ, կառուցապատման ծավալատարածական լուծումներ, էսքիզային առաջարկություններ և այլ գծագրական ու վիզուալիզացման նյութեր: Հաստատվում է ՀՀ կառավարության արձանագրային որոշմամբ՝ սահմանված կարգով շահագրգիռ մարմինների հետ համաձայնեցնելուց հետո:

5) կառուցապատման ներդրումային հայեցակարգով նախատեսված՝ թաղամասերի և համալիրների կառուցապատման սխեմաները ու առանձին շինարարական օբյեկտների ճարտարապետաշինարարական նախագծերը:

Մշակվում են կառուցապատողների կողմից՝ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 14-րդ կետի «ա» և «բ» ենթակետերին, ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշմամբ հաստատված N1 հավելվածի VI բաժնի դրույթներին և լիազոր մարմնի կողմից հաստատված՝ «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմին և բովանդակությանը ներկայացվող պահանջներին» համապատասխան:

6) առանձին շինարարական օբյեկտների ճարտարապետաշինարարական նախագծերը

Մշակվում են կառուցապատողների կողմից՝ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 14-րդ կետի «բ» ենթակետերին, ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշմամբ հաստատված N1 հավելվածի VI բաժնի դրույթներին և լիազոր մարմնի կողմից հաստատված՝ «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմին և բովանդակությանը ներկայացվող պահանջներին» համապատասխան:

IV. ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն (այսուհետ՝ լիազոր մարմին)՝

1) նախապատրաստում և սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանն է ներկայացնում հատուկ կարգավորման օբյեկտների առաջադրման և տարածքների առանձնացման վերաբերյալ առաջարկությունները,

ինչպես նաև այդ օբյեկտներում քաղաքաշինական գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերի նախագծերը.

2) համակարգում է հատուկ կարգավորման օբյեկտների պլանավորման և կառուցապատման գործընթացները, այդ թվում՝

ա. քաղաքաշինական զարգացման հայեցակարգերի, գոտևորման նախագծերի և քաղաքաշինական կանոնադրությունների մշակումը,

բ. հատուկ կարգավորմանը վերաբերող իրավական և կազմակերպչական հարցերի, նախագծային փաստաթղթերի քննարկումների կազմակերպումը Հայաստանի Հանրապետության ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի քաղաքաշինական խորհրդում.

3) հատուկ կարգավորման օբյեկտներում համաձայնեցնում է՝

ա. հատուկ կարգավորման օբյեկտների սահմանների նկարագիրը

բ. գոտևորման նախագծերը և քաղաքաշինական կանոնադրությունները

գ. քաղաքաշինական զարգացման հայեցակարգերը,

դ. հողահատկացման վերաբերյալ առաջարկությունները,

ե. կառուցապատման ներդրումային հայեցակարգերը՝ առանձին համալիրների կառուցապատման սխեմաները, ճարտարապետահատակագծային առաջադրանքները, ճարտարապետաշինարարական նախագծերի ճարտարապետական մասի էսքիզային լուծումները, շինարարական օբյեկտների էսքիզային նախագծերը:

11. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման տարածքային մարմինները (այսուհետ՝ ՀՀ մարզպետներ) հատուկ կարգավորման օբյեկտներում համաձայնեցնում են՝

1) ժամանակավոր տաղավարների, այդ թվում՝ ավտոտնակների տեղադրման նպատակով հողամասերի առանձնացման առաջարկությունները.

2) ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշմամբ հաստատված N4 հավելվածի N1 ցանկի 3-րդ կետի առաջին ենթակետով սահմանված աշխատանքները:

3) միջին ռիսկայնության աստիճանի II կատեգորիայի դասակարգում ունեցող և «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ ոչ ձեռնարկատիրական նպատակով կառուցվող օբյեկտների հողհատկացման առաջարկները, ճարտարապետահատակագծային առաջադրանքները (նախագծման թույլտվությունները) և էսքիզային նախագծերը,

4) բազմաբնակարան շենքերի առաջին հարկերում նոր բացվածքների իրականացման, պատուհանը դռան վերակառուցելու և մուտքի աստիճաններ ու թեքահարթակներ կազմակերպելու, բակային ճակատների վերակառուցման, ձեղնահարկերի իրականացման, շենքերի բակային ճակատներում կցակառույցների իրականացման ճարտարապետահատակագծային առաջադրանքների նախագծերը և ճարտարապետաշինարարական նախագծերը:

V. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐՈՒՄ

12. Հատուկ կարգավորման օբյեկտներում տեղական ինքնակառավարման մարմինները քաղաքաշինության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրենց վերապահված գործառույթներն իրականացնում են.

ա. սույն կարգի 10-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերը 14-րդ կետով սահմանված ընթացակարգով համաձայնեցնելով լիազոր մարմնի հետ,

բ. սույն կարգի 11-րդ կետով սահմանված փաստաթղթերը 16-րդ կետով սահմանված ընթացակարգով համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության համապատասխան մարզպետի հետ:

13. Այն դեպքերում, երբ քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտի համար մշակվել և սահմանված կարգով հաստատվել են տարածքի գոտևորման նախագիծը և քաղաքաշինական կանոնադրությունը և քաղաքաշինական զարգացման հայեցակարգը, ու վերջիններիս դրույթներին համապատասխան մշակվել և սույն կարգին համապատասխան լիազոր մարմնի հետ համաձայնեցվել է որոշակի համալիրի կառուցապատման սխեման կամ նախագիծը, դրա շրջանակներում իրականացվող՝ հողահատկացումները, հողերի գործառնական նշանակության փոփոխությունները, առանձին օբյեկտների ճարտարապետահատակագծային առաջադրանքները և ճարտարապետաշինարարական նախագծերը լիազոր մարմնի համաձայնեցմանը չեն ներկայացվում:

14. Տեղական ինքնակառավարման մարմինները սույն կարգի 10-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերը և առաջարկությունները ներկայացնում են համապատասխան մարզպետին, որը փաստաթղթերը ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է դրանք լիազոր մարմնի համաձայնեցմաը՝ կցելով հարցի վերաբերյալ իր կարծիքը (եզրակացությունը):

15. Լիազոր մարմինն ուսումնասիրում է հարցը և առաջարկությունները ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում իր եզրակացությունը ներկայացնում է մարզպետին, որը 3-օրյա ժամկետում ներկայացնում է այն համապատասխան համայնքի ղեկավարին:

16. Սույն կարգի 11-րդ կետում նշված փաստաթղթերը լիազոր մարմնի համաձայնեցմանը չեն ներկայացվում: Դրանց վերաբերյալ համապատասխան մարզպետներն իրենց եզրակացությունները՝ համապատասխան հիմնավորումներով ներկայացնում են համայնքների ղեկավարներին՝ փաստաթղթերը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

17. Համաձայնեցման ներկայացվող **հողահատկացման առաջարկության** փաթեթում ներառվում են՝

1) ճարտարապետահատակագծային առաջադրանքի նախագիծը,

2) հողամասի հատակագիծը (շրջադարձային կետերի կոորդինատներով),

3) իրավիճակային հատակագիծը՝ 1:500 կամ 1:1000 մասշտաբով, նշելով հողամասը, հարևան հողօգտագործումները, գոյություն ունեցող և նախատեսվող շենքերը և շինությունները, դրանց բնույթը, շենքերի, շինությունների միջև

հեռավորությունները, հողամասից 70մ շառավղով միջպետական, հանրապետական, տեղական նշանակության ճանապարհները, ինժեներական ենթակառուցվածքի գծային և կետային օբյեկտները,

4) տեղեկանք Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածին առնչություն ունենալու և հողամասին առնչվող այլ սահմանափակումների մասին,

5) գլխավոր հատակագծի և գոտևորման նախագծի առկայության դեպքում՝ հողամասի տեղադիրքը նշված փաստաթղթերի հիմնական գծագրերում, հողամասի փաստացի և ծրագրային փաստաթղթերով նախատեսված նպատակային և գործառնական նշանակությունները:

6) համայնքի ղեկավարի տեղեկանք-հիմնավորումը՝ համայնքի համար նախատեսվող օբյեկտի կարևորության, նախատեսվող ներդրումների չափի, հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներին համապատասխանության վերբերյալ, հարցին առնչվող այլ տեղեկատվություն:

18. Համաձայնեցման ներկայացվող **կառուցապատման (վերակառուցման) առաջարկության** փաթեթում ներառվում են՝

1) ճարտարապետահատակագծային առաջադրանքի նախագիծը,

2) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից գույքի գրանցման վկայականի պատճենը (օրենքով սահմանված կարգով հաստատված հողամասի, շինությունների հատակագիծը)

3) կառուցապատման սխեման՝ 1:500 կամ 1:1000 մասշտաբով, նշելով հողամասը, հարևան հողօգտագործումները, գոյություն ունեցող և նախատեսվող շենքերը և շինությունները, դրանց բնույթը, շենքերի, շինությունների միջև հեռավորությունները, հողամասից 70մ շառավղով միջպետական, հանրապետական, տեղական նշանակության ճանապարհները, ինժեներական ենթակառուցվածքի գծային և կետային օբյեկտները, հողամասին առնչվող սահմանափակումները (սերվիտուտներ, ընդհանուր օգտագործման տարածքներ և այլն)

4) վերակառուցման դեպքում՝ օբյեկտի քաղաքաշինական անձնագիրը կամ դրա բացակայության դեպքում՝ տեխնիկական վիճակի մասին եզրակացությունը,

5) համայնքի քաղաքաշինական խորհրդի (առկայության դեպքում) դրական եզրակացությունը կամ խորհրդի եզրակացության վերաբերյալ համայնքի ավագանու որոշումը

6) գլխավոր հատակագծի և գոտևորման նախագծի առկայության դեպքում՝ հողամասի տեղադիրքը նշված փաստաթղթերի հիմնական գծագրերում, հողամասի փաստացի և ծրագրային փաստաթղթերով նախատեսված նպատակային և գործառնական նշանակությունները:

19. Համաձայնեցման ներկայացվող՝ **կառուցապատման ներդրումային հայեցակարգերի** (առանձին համալիրների կառուցապատման սխեմաների ու ճարտարապետաշինարարական նախագծերի ներառմամբ) փաթեթում ներառվում է

1) կառուցապատման սխեման (սխեմաները), 1:500 կամ 1:1000 մասշտաբով,

2) առանձին շինարարական օբյեկտների էսքիզային նախագծերը, ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի հրամանով հաստատված՝

«Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմին և բովանդակությանը ներկայացվող պահանջներին» համապատասխան կազմով:

VI. ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ

20. Երևան քաղաքում հատուկ կարգավորման օբյեկտների առաջադրման և տարածքների առանձնացման վերաբերյալ առաջարկությունները Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն մշակում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության և Երևանի քաղաքապետի հետ համատեղ:

21. Եթե հատուկ կարգավորման օբյեկտների առաջադրման և տարածքների առանձնացման վերաբերյալ առաջարկություններն առնչվում են Երևան քաղաքի վարչական սահմաններին հարակից համայնքներին, ապա սույն կարգի 20-րդ կետով սահմանված առաջարկությունների մշակմանը մասնակցում են նաև համապատասխան հարակից համայնքի (համայնքների) ղեկավարը և տարածքային կառավարման մարմինը (մարզպետը):

22. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությունը քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքների առանձնացման առաջարկությունները սահմանված կարգով ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը: »:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
<< ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի N 792-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

1.	**Անհրաժեշտությունը**
	«ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N792-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակումը նախատեսված է «ՀՀ կառավարության 2016 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N131-Ն որոշման N1 հավելվածի 51-րդ կետով:
2.	**Ընթացիկ իրավիճակը և խնդիրները**
	Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտներում քաղաքաշինական գործունեության համակարգման փորձը և խնդիրների վերլուծությունը ցույց են տալիս, որ որոշակի խնդիրներ կան, կապված քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների քաղաքաշինական փաստաթղթերի մշակման համար պատասխանատուների, փաստաթղթերի կազմին և բովանդակությանը ներկայացվող պահանջների, համաձայնեցման ներկայացվող փաստաթղթերի սպառիչ ցանկի սահմանման հետ: Որոշմամբ սահմանված դրույթներն անհրաժեշտ է համապատասխանեցնել

	նաև վերջին ժամանակահատվածում ընդունված մի շարք իրավական ակտերի դրույթներին, մասնավորապես՝ ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման, քաղաքաշինության ոլորտի լիազոր մարմնի կողմից հաստատված ՝ «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնների» փոփոխված դրույթներին, ինչպես նաև ՀՀ պետական մարմինների անվանումների փոփոխություններին: Հստակեցման կարիք ունի նաև ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N728-Ն և ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N792-Ն որոշումների միջև կապը, հաշվի առնելով, որ N792-Ն որոշմամբ հաստատված կարգը մշակվել է N728-Ն որոշմամբ առանձնացված տարածքների համար, հաշվի առնելով դրանց առանձնահատկությունները:
3.	**Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը**
	Առանձնացված օբյեկտներում քաղաքաշինական գործունեության իրականացման համար գործող լրացուցիչ պահանջները սահմանել պարզ, հասկանալի ընթացակարգերով և հստակ պահանջներով
4.	**Կարգավորման նպատակը և բնույթը**
	Որոշման նախագծով վերանայվել կամ լրացվել են քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների քաղաքաշինական փաստաթղթերին վերաբերող դրույթները, համաձայնեցման պահանջները և համաձայնեցման ներկայացող փաստաթղթերի ցանկերը, հստակ նշվել է որ օբյեկտների վրա է տարածվում ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N792-Ն որոշմամբ հաստատված կարգը, իրականացվել են նաև այլ ճշգրտումներ:
5.	**Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք**
	Նախագիծը մշակվել է ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից:
6.	**Ակնկալվող արդյունքը**
	Որոշման նախագծի ընդունման արդյունքում կվերացվեն իրավական ակտերում առաջացած անհամապատասխանությունները, կկանոնակարգվեն հատուկ կարգավորման գոտիներում քաղաքաշինական գործունեությանը ներկայացվող պահանջները, գործընթացը կիրականացվի հստակ սահմանված պայմանների շրջանակներում:

ՏԵՂԵԿԱՆՔ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի N 792-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N792-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի

ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի ավելացման և նվազեցման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի N 792-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N792-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունմամբ պայմանավորված այլ իրավական ակտերում փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի N 792-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N792-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը տեղադրվել է ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի կայքում՝ www.minurban.am :